ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԿՈՍՈՎՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱ՞Կ
(Յապաւուած)

Այցելելով Թբիլիսի՝ Ա.Պ.Հ. գործադիր քարտուղար (նախկին «Դ.») Բորիս Բերեզովսկին յայտարարեց.- «Կոսովոն մեզ հնարաւորութիւն կը տայ գտնել անդրկովկասեան հակամարտութիւնների լուծման տարբերակը»:

Դա Ղարաբաղեան Հարցի լուծման գործում նորութիւն չէ...

Մի ժամանակ Ղարաբաղեան հիմնահարցի լուծման բանալի էին համարում սերբական տարբերակն ու Դէյթոնեան համաձայնագիրը, այնուհետեւ ծնուեց կոսովոյեան եղանակը...: Այդ բոլորի հիմքում Ադրբեջանի միւնոյն պահանջն է՝ զօրք մտցնել տարածաշրջան եւ հայերին ստիպել համաձայնութեան գալ արցախահայութեանն ինքնավարութիւն տալու հարցում...

Կոսովոն Ալիեւի դուրը եկել է յատկապէս այն պատճառով, որ տարածքը նուաճւում է ոչ թէ ազերիական, այլ ՆԱՏՕական զօրքերի միջոցով: Հասկանալի է, որ Ալիեւը ծաղրանքի ենթարկուելու համար չէ, որ իր զօրքը, ներեցէք՝ դասակը, ցանկանում է մտցնել Հարաւսլաւիա, այն էլ թուրքական ստորաբաժանման կազմում, նրա ֆինանսներով:

Այստեղ գլխաւորն այն է, որ արեւելքի նաւթային «արքան» ցանկանում է խաղաղարարի համբաւ ձեռք բերել...

Սակայն ո՛չ Ալիեւը եւ ո՛չ էլ Բերեզովսկին չեն հասկանում Կոսովոյի խաղաղութեան համաձայնագրի էութիւնը: ...Կոսովոյին տրւում է սուբստանցիոնալ ինքնավարութիւն: Դա այնպիսի կարգավիճակ է, երբ ինքնավարութիւնն ինքնիշխանութիւնից բաժանւում է գրեթէ նրբերանգային տարբերութեամբ, աւելի ճիշտ, այնտեղ աւելի շատ ինքնուրոյնութիւնն է, ինքնիշխանութիւնը, քան՝ ինքնավարութիւնը:

Այնուհետեւ, շփման խումբը Կոսովո է մտցնում խաղաղարարներ, որոնց նպատակն է նախապատրաստել ալբանացիների կառավարման մարմինների ստեղծումը...Դրանց ձեւաւորումից յետոյ, հասկանալի է, ոչ մի սերբ չի համարձակուի մնալ Կոսովոյում: Հանրապետութիւնում 10 տոկոս կազմող սերբերն էլ կը հեռանան: Կոսովոն կը դառնայ զուտ ալբանական եւ հանրաքուէն հնարաւորութիւն կը տայ այն դարձնել անկախ:

Արդեօք, առաւել լայն անկախութեան տանող այս ամէնն Ալիեւը կը ցանկանա՞յ կիրառել Ղարաբաղում...

Չարաչար սխալւում են այն բոլոր գործիչները, որոնց թւում է, թէ Կոսովոյի կարգավիճակը, որը դեռ չի էլ ընդունուել, կարող է կիրառուել Ղարաբաղում: Դա բացատրւում է այն բանով, որ Կոսովոն ու Ղարաբաղն իրար նման են լոկ արտաքուստ...Բայց մեծ է դրանց տարբերութիւնը:

Առաջին. Ղարաբաղն անկախ երկիր է եղել, որը բռնակցուել է 20ական թուականներին: Այժմ պարզապէս ուղղւում է սխալը, շտկւում անօրինականութիւնը:

Երկրորդ, Ղարաբաղն ինքնավար մարզ էր, առանձին պետական միաւոր, որն անկախութիւն ստացաւ այն ժամանակ, երբ Խորհրդային Միութիւնից անկախ դարձաւ նաեւ Ադրբեջանն ու յայտարարեց, որ ինքը 1918թ. Ադրբեջանի ժառանգն է, իսկ այն ժամանակ Արցախը նրա կազմում չէր:

Երրորդ, Ղարաբաղն անկախ է դարձել հանրաքուէով՝ արտայայտելով բոլոր տեղաբնիկների միաձնական կամքը:

Չորրորդ. Ղարաբաղի անկախութիւնն իրականացուել է Խ. Միութեան Գերագոյն Խորհրդի որոշման հիման վրայ, ինչը հիմք է դարձել նաեւ Ադրբեջանի անկախութեան համար:

Հինգերորդ. Ղարաբաղն անկախութեան է հասել ռազմական բազմամեայ գործողութիւններով, 5 հազար ազատամարտիկների արեան գնով:

Վեցերորդ. Լ.Ղ.Հ.ն արդէն ինքնուրոյն պետութիւն է, որի անկախութիւնը դէ ֆակտո ճանաչել են շատ պետութիւններ:

Այլ խոսքով ասած՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնն անկախ պետութիւն է դարձել՝ միջազգային բոլոր օրէնքները հաշուի առնելով: Կոսովոն նոր է բռնում այդ ուղին, գուցէ նաեւ չկարողանայ: Նա ճանապարհի սկզբում է, Ղարաբաղն աւարտել է այն:

Մանուկ Մանուկեան
«Երկիր», 10 Մարտ